



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No _____

« _____ » _____ 2015

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2015 թվականի մարտի 27-ի N 203-Ն հրամանով հաստատված «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման» կարգի 4-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման» ընթացակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած նախորդ տարիների շրջանավարտների (ներառյալ 2014/2015 ուստարվա) պետական նմուշի դիպլոմ ստանալու համար փաստաթղթերի ընդունումը կազմակերպել տվյալ տարվա մայիսի 11-ից հունիսի 2-ը ներառյալ:

3. Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպել տվյալ տարվա համար ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված պետական կամ հավատարմագրված ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

4. Յուրաքանչյուր մասնագիտության գծով՝ ոչ ուշ, քան դրանց աշխատանքները սկսվելուց երկու շաբաթ առաջ ձևավորել մեկ պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով, որը կգործի միայն տվյալ ուսումնական տարվա համար նախատեսվող քննաշրջանի ժամկետում:

5. Ստեղծել պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար տվյալ տարվա քննությունների կազմակերպման և անցկացման ընդունող հանձնաժողով՝ համաձայն Հավելված 2-ի և քարտուղարություն՝ համաձայն Հավելված 3-ի:

6. Հաստատել շրջանավարտների դիմում-հայտի ձևը՝ համաձայն Հավելված 4-ի:

7. Հանձնարարել քննությունների կազմակերպման և անցկացման ընդունող հանձնաժողովին (նախագահ՝ Ռ.Աբրահամյան)՝ փաստաթղթերի ընդունումից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը ներկայացնել պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններ կազմակերպող տվյալ տարվա պետական կամ հավատարմագրված ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) ցանկը և քննական առարկաների ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման ժամանակացույցը՝ ըստ մասնագիտությունների:

8. ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ (պետ՝ Ա.Բաղդասարյան) Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների փաստաթղթերի ընդունելության հայտարարությունը տեղադրել նախարարության կայք-էջում և հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով:

9. Սույն հրամանի 3-րդ կետով հաստատված ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ ապահովել անհրաժեշտ պայմաններ պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման համար:

10. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:



ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

1. Սույն ընթացակարգը մշակվել է «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման» կարգի պահանջների իրականացման համար:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետև՝ նախարար) հրամանով ստեղծվում է պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման ընդունող հանձնաժողով (այսուհետև՝ ընդունող հանձնաժողով):

3. Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար շրջանավարտը սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետև՝ նախարարություն) է ներկայացնում.

1) լրացված դիմում-հայտ.

2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ու ներդիրի (միջուկի) բնօրինակը և պատճենները.

3) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական) բնօրինակը և պատճենը.

4) 2 լուսանկար (3 X 4 չափսի):

4. Դիմում-հայտը լրացվում և պահանջվող փաստաթղթերը ներկայացվում է դիմորդի կամ նրա լիազորված անձի կողմից:

5. Ընդունող հանձնաժողովի քարտուղարության կողմից ստուգվում է դիմում-հայտի լրացման ճշտությունը, այն վավերացվում և ստացական է տրվում ընդունված փաստաթղթերի վերաբերյալ, որի մասին շրջանավարտը ստորագրում է գրանցման մատյանում:

6. Ընդունող հանձնաժողովի քարտուղարությունը դիմում-հայտերի ընդունելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում շրջանավարտներին տալիս է քննական թերթ՝ հաստատված ընդունող հանձնաժողովի քարտուղարի կողմից, որտեղ նշված են ամփոփիչ ատեստավորման քննությունները, դրանց հանձնման օրերը, ընտրված ուսումնական հաստատությունը և ժամը: Քննական թերթը ստանալու համար շրջանավարտը ներկայանում է անձամբ կամ նրա կողմից լիազորված անձը՝ ներկայացնելով անձնագիրը և ստացականը, որի համար շրջանավարտը ստորագրում է գրանցման մատյանում:

7. Դիմում-հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո, ընդունող հանձնաժողովի քարտուղարը ստորագրում է հայտերի բազայի մասին տեղեկանքը, որտեղ նշվում է դիմում-հայտերի քանակը, ամփոփիչ ատեստավորման քննությունների ընդհանուր թիվը: Տեղեկանքը ներկայացվում է ընդունող հանձնաժողովին:

8. Ուսումնական հաստատության տնօրենը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների անվանական կազմը:

9. Ամփոփիչ ատեստավորման քննությունն սկսելու օրվանից առնվազն երկու շաբաթ առաջ ուսումնական հաստատությունը հրապարակում է քննական հարցաշարը՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան:

10. Քննություններից մեկ օր առաջ ընդունող հանձնաժողովի քարտուղարը՝ ընդունող հանձնաժողովի նախագահի կողմից ըստ առարկաների քննություն հանձնող շրջանավարտների հաստատված անվանացանկը հանձնում է ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահին:

11. Հանձնաժողովի նախագահը և նախարարության լիազոր ներկայացուցիչը, նախքան շրջանավարտների քննասենյակ մուտքը, ստուգում են անձը հաստատող փաստաթղթի և քննական թերթիկի համապատասխանությունը:

12. Ամփոփիչ ատեստավորման քննություններն անցկացվում են բանավոր:

13. Ամփոփիչ ատեստավորման քննություններն գնահատվում են հինգ բալային գնահատման համակարգով՝ «անբավարար», «բավարար», «լավ» և «գերազանց»: Ամփոփիչ ատեստավորման քննությունից «անբավարար» գնահատական ստանալը շրջանավարտին չի զրկում մյուս ամփոփիչ ատեստավորման քննությունները հանձնելու իրավունքից:

14. Ամփոփիչ ատեստավորման տվյալ տարվա քննություններին մասնակցած և քննական առարկայից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտների համար, հաջորդ ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննություններին շրջանավարտի մասնակցության դեպքում, պահպանվում է ամփոփիչ ատեստավորման նախորդ տարվա համապատասխան մասնագիտության գծով նախատեսված քննական մյուս առարկայից ստացած «դրական» գնահատականը:

15. Քննական գնահատականների գրանցումը կատարվում է քննություն անցկացնող ուսումնական հաստատության նախապես համարակալված և կնքված մատյաններում: Կազմվում է նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրություն, որի մեջ նշվում են ամփոփիչ ատեստավորման քննությունների գնահատականները, հատուկ կարծիքները և այլն: Տվյալ օրվա համապատասխան քննական առարկայի քննական տեղեկագրերի մեկ օրինակը նախարարության լիազոր ներկայացուցիչը, քննությունների ավարտից անմիջապես հետո, ներկայացնում է ընդունող հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին: Արձանագրությունները և քննական տեղեկագրերը ստորագրում են ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահը, անդամները և նախարարության լիազոր ներկայացուցիչը:

16. Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները բողոքարկման ենթակա չեն:

17. Ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքի վերահսկողությունն իրականացվում է նախարարության լիազոր ներկայացուցիչների կողմից:

18. Պետական նմուշի դիպլոմների հատկացման համար ընդունող հանձնաժողովը նախարարին է ներկայացնում հաշվետվություն, որտեղ նշվում է տվյալ ուսումնական հաստատության շրջանավարտների անուն, ազգանունները և քննական հանձնաժողովների որոշումները:

19. Շրջանավարտին պետական նմուշի դիպլոմ շնորհելու մասին որոշումը հաստատվում

է նախարարի հրամանով:

20. Շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ հանձնվում է նախարարի համապատասխան հրամանի հիման վրա:

21. Ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնած շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ և ներդիր (պահպանելով նախկին դիպլոմի ներդիրի ընթացիկ գնահատականները) տրվում են՝ քննությունները կազմակերպած ուսումնական հաստատության կողմից, համապատասխան մասնագիտության քննական հանձնաժողովի նախագահի և քննությունն անցկացրած ուսումնական հաստատության տնօրենի ստորագրությամբ, վավերացված այդ ուսումնական հաստատության պետական զինանշան ունեցող կնիքով:

Քննությունների կազմակերպման և անցկացման ընդունող հանձնաժողով (ՔԿԱԸՀ)

1. Ռ.Աբրահամյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
2. Ս.Համբարձումյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
3. Վ.Բավեյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ,
4. Տ.Սահակյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ
5. Ա.Պողոսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի պետ
6. Վարուժան Խաչատրյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության լիցենզավորման գործակալության լիցենզավորման բաժնի պետ
7. Գ.Խաչատրյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ բաժնի գլխավոր մասնագետ

**Քննությունների կազմակերպման և անցկացման ընդունող հանձնաժողովի
քարտուղարություն**

1. Ս.Համբարձումյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
2. Աշխեն Մկրտչյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի գլխավոր մասնագետ
3. Ալլա Մարտիրոսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ բաժնի առաջատար մասնագետ

Հավելված 4

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
----- թ.-ի N ----- հրամանի

1 Անձնական համարը							
2 Անձնագիր							
սերիա				համար			
3							
Ազգանուն							
Անուն							
Հայրանուն							
4 Բնակության հասցեն քաղաք/գյուղ _____ մարզ _____ փողոց _____							
5 Քաղաքացիությունը							
				<<	ԱՊՀ	Այլ	

Կրթությունը
(միջին մասնագիտական ուսումնական հաստատության անվանումը և հասցեն (քաղաք, գյուղ, մարզ))

(կրթական ծրագիրը, մասնագիտությունը, ավարտական փաստաթղթի անվանումը)

7 Հանձնել եմ ավարտական քննություններ /դիպլոմային աշխատանք/ հետևյալ առարկաներից՝		
ԱՌԱՐԿԱ	ՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ / բանավոր /	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
1.		
2.		
3.		

Դիմող՝ _____
ստորագրություն ազգանուն, անուն

ՔԿԱԸՀ Քարտուղարության անդամ՝ _____
ստորագրություն ազգանուն, անուն

« ___ » _____ 2015թ. Կ.Տ.

✕ ✕ ✕ ✕ ✕ ✕ ✕

Ս Ս Ա Ց Ա Կ Ա Ն

Դիմող՝ _____
ազգանուն, անուն, հայրանուն

1

Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած նախորդ տարիների շրջանավարտների պետական նույնի դիպլոմ ստանալու համար 2015թ. պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար ներկայացրել եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում	4. Անձը հաստատող փաստաթուղթ և պատճենը
2. Դիպլոմի բնօրինակը և պատճենը	5. լուսանկար (3x4 սմ չափսի)
3. Դիպլոմի միջուկի բնօրինակը և պատճենը	6. _____
Դիմող՝ _____ Ստորագրություն	_____ Ազգանուն, անուն
Փաստաթղթերն ընդունեց՝ _____ Ստորագրություն	_____ Ազգանուն, անուն

«-----» -----2015թ.